

գամ նկատել է Մեսրոպ վարդապետ (այժմ արքեպիսկոպոս) Տէր Մովսիսեան (\*), այլ ևս կասկածի տեղիք չի թողնում ճառընտրի գրչի և ժամանակագրութեան Մխիթարների նոյնութեան մասին. ժամանակագրութեան մէջ «Կաթողիկոսի Հայոց» հատուածում (եր. 16) Մխիթարը Լուսաւորչի և նորա տոհմի կաթողիկոսների համար գործադրում է «սուրբ», իսկ մնացածների համար «տէր» տիտղոսը. այս երևոյթը բացատրում է ճառընտրի երկրորդ Մնացորդաց վերջում գրչի հետեւեալ նկատողութեամբ. «տն. Սաակա կաթողիկոսի՝ զմնացորդս յետ ա. մզէիցն է թարքմանել, որ կարգասցէ զաւրինակս զայս, ազաւթս աւրասցէ ի վերա սրբոյն Սաակա կաթողիկոսի. մինչեւ ցՍաակ սբ. ասին: Իսկ անտի եւ այսր տր.»:

Մեզ կը մնայ ճառընտրի հետ կապուած մի կարեւոր խնդիր ևս պարզել, որ բանասէրներին այլեայլ բացատրութիւնների առիթ է տուել և ոմանց մոլորութեան մէջ ձգել: Վաւերական և անվաւեր գրքերի ցանկը 369թ. (\*\*), բաղկացած է չորս հատուածից, որոնցից երկրորդը՝ «Արքոյն Կղեմա, եթէ ո՞ր գիրք ընդունելի են» վերնագրով՝ վերջանում է «Ջայս ես եւ Անանէ գրեցաք ի վրմի քաղաքի, որ եկեղեցի աւրանեցաք»: Աւելորդ ենք համարում մի առ մի մէջ բերել այս վկայութեան հետ կապուած զանազան ենթադրութիւններն ու կարծիքները (\*\*\*) . էականն այն է, որ «Ես եւ Անանէ» խօսքերը գիտնականներից ոմանց կողմից կապուել է Այրիվանեցու անձին հետ. մոլորուածներից վերջինը մենք ենք, որ մեր «Մխիթար Այրիվանեցի» աշխատութեան մէջ նոյն միտքն էինք պաշտպանել: Գրուած լինելով Ն. Նախիջեանում, տարբազարար, գտնել չկարողացանք Մեսրոպ վ. Տէր Մովսիսեանի վերոյիշեալ գիրքը, որի եզրակացութիւնը Տաթեւացու վկայութեան վերայ հիմնուած, թէ «Ia i Anania, ia ne moget otnositsya k Mhitarou (եր. 244): Մենք կարող ենք այժմ նոր և աւելի հին փաստեր աւելացնել, որոնք պարզում են, թէ յիբաւի, այդ խօսքերը ոչ մի կապ չունին Մխիթարի անձի հետ, այլ նորա աղբիւրի խօսքերն են: Էջմ. № 4166 ձեռագիրը՝ Տաթեւի նախկին № 55, Պատճառոց Գիրքը ոչ ուշ քան ժ. Գ. գարի գործ, բայց հաստատուն կերպով 1346 թուականից առաջ՝ մի յետին ժամանակագրական նկատողութիւնից դատելով, ունի նոյն հատուածը իւր վերջաբանութեամբ (\*\*\*\*): Բայց աւելի

կարեւորը Վարդանի վկայութիւնն է Հեթում թագաւորին գրած «Ժղլանք» ի մէջ, որ զանազան խնդիրների բացատրութիւններ են, մէկն էլ գրանցից «Իսկ քանի՞ գիրք են Աճաշուհն» հարցի պատասխանը: Վարդանը մի առ մի թուելով Հին և Նոր Կտակարանի գրքերի անունները, ի վերջոյ աւելացնում է. «Եւ Կղեմ գրեալ է Ե. գիրք ընկալաք յեկեղեցի: Ես եւ Անանէ Դամասուկացի: Ա. գիրք... («ՂՅակորայ») պիտի լինի, փշացած է) զընթերցուածն ասէ: Բ. կանոնք առաքելոցն: Գ. բանքն Յոստոսի: Դ. գիրքն Դիոնիսեա Արիսպագացույ: Ե. զոր ես գրեցի զքարոզութիւն. Պետրոսի առաքելոյ» (\*): Նոյն ցանկը բերում է եւ Յակոր Ղրիմեցին, Վարդանից առնելով եւ վերջին խօսքերը սխալմամբ կապելով Վարդանի անձի հետ (\*\*): Ուրեմն Մխիթարից առաջ այդ ցանկը յայտնի էր Վարդանին:

Մխիթարի երկրորդ աշխատութիւնը՝ ժամանակագրութիւնը՝ ցամաք է, մանաւանդ առաջին մասում, որ անունների ցանկ է, խմբերի բաժանուած, Հրէից, Հայոց, Վրաց աշխարհիկ և եկեղեցական նահապետների, թագաւորների և կաթողիկոսների, հոռոմեական և բիւզանդական թագաւորների, արաբ, սելջուկ և թաթար իշխանապետների, վերջաւորելով իրանից առաջ եղած ժամանակագիրների և պատմագիրների անուանացանկով, որոնցից և օգտուել է: Այս ցանկի մէջ կան հեղինակներ, որոնք դեռ գտնուած չեն:

Երկրորդ մասը բացառապէս Ս. Գրքի ժամանակագրութիւն է, որի որոշ մասերի զուգահեռը ունի և իւր ճառընտրի մէջ համապատասխան մասերի լուսանցքներում, որից և համեմատութեան օրինակներ բերինք քիչ առաջ:

Երրորդ մասը «վասն Հայաստան ազգիս և աշխարհիս պատմութեանց են», կապելով և տիրապետող ազգերի հետ: Այս մասն է, որ փոքր ինչ հետաքրքրութիւն է զարթեցնում՝ իբրև քաղուածք և համեմատելի նիւթ նախընթաց հայ և հայերէն թարգմանուած ժամանակագիրների հետ, երբեմն միայն ժի-ժի. դարերի համար տալով փոքրիկ նորութիւններ, որ միայն Այրիվանեցուց գիտենք: Ճանկերի եւ ժամանակագրութեան վերջում եղած յաւելումների մասին խօսք եղաւ վերև, մանրամասնութիւնները կարելի է տեսնել մեր «Մխիթար Այրիվանեցի» ևն. աշխատութեան մէջ (\*\*):

Մխիթարի երրորդ պատմական-գրական արժէք ունեցող երկը Ստեփանոս Սիւնեցու վկայաբանութիւնն է. մի երկրորդ վկայաբանութիւն ևս ունի գրած, յետնագոյն վկայութեան համաձայն. «Վարք երանելոյն Ալէքսանոսի մարդոյն այ.» սկս. «Ալէքսանոս այ. մարդն», Արեգի Թ. և Մարտի Ժէ., որ առան-

(\*) Istoría Perevoda Biblii. S. P.. 1902, եր. 97.  
 (\*\*\*) Հրատարակել է Կ(արապետ) Վ(արդապետ), Արարատ, 1895, եր. 408, բայց ուղղագրական և վերջին տողի սխալ ընթերցումներով (տես Յաւել. Գ. 8):  
 (\*\*\*\*) Հանդ. Ամս. 1891, եր. 161-167, Հ. Գալէմբարեանի յօդուածը: Հ. Ներսէս Ազնիւեանի յօդուածը, Հանդ. Ամս. 1907 եր. 242: Mesrop Ter-Movsisian. Istoría Perevoda Biblii. S. P. 1902: Ուրիշ գիտնականների և հեղինակների եզրակացութիւնը. եր. 238 և շար. 244:  
 (\*\*\*\*\*) Չեռ. էջմ. № 4166. Տաթեւի նախկին № 55, 125ր. «Բն. թճ. եւ կա. ամով յառաջ քան զհայ թվականն չինեցաւ զեղաքաղաքն Գառնի ի Գեղամայ եւ ի Գառնիոյ գո. եճ. հդ. տարի է մինչ ի յայտոր է թիւն ձղե»:

(\*) Չեռ. էջմ. № 2544, 139ա. 1  
 (\*\*) Չեռ. էջմ. № 1461, 182բ. 1  
 (\*\*\*) եր. 14-15. § 7: